

ՀԵՆՐԻԿՈՍ ԲՐԵՆՆԵՐԸ ԵՒ ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԼԱՏԻՆԵՐԷՆ ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

ՊԵՏՐՈՍ Հ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Եւրոպայում Ե. դ. հայ պատմագիր Մովսէս Խորենացու անձի եւ գործի նկատմամբ հետաքրքրասիրութեան ակունքներն ունեն շուրջ 300ամեայ վաղեմութիւն: Պատմահօրը համաշխարհային գիտական եւ ընթերցող լայն հասարակայնութեանը ներկայացնելու գործում վիթխարի ծառայութիւն են մատուցել գրահրատարակիչ-տպագրիչ թովմաս եպիսկոպոս, Միքայէլ, Մատթէոս եւ Ղուկաս Վանանդեցիները, որոնք 1695ին Ամստերդամում իրականացրեցին Խորենացու գլուխգործոցի բնագրի անդրանիկ հրատարակութիւնը: Սրանից է, որ յետագայում կատարուեցին, ինչպէս անգլիացի Գէորգ եւ Գուլիէլմուս Վիստոն եղբայրների, այնպէս էլ միւս օտար առաջին թարգմանութիւնները², որոնց շնորհիւ Խորենացին միանգամից յայտնի անուն դարձաւ արեւելագէտ-պատմաբանների շրջանում³: Սակայն, մինչեւ Վիստոն եղբայրների լատիներէն թարգմանութիւնը եւ հրատարակութիւնը կատարուել է մի փորձ եւս, ճիշդ է, ոչ լիակատար, Խորենացու Պատմութիւնը լատիներէնով Արեւմուտքին ներկայացնելու ուղղութեամբ: Փորձ, որը պատկանում է շուէդ դիւանագէտ, Սպահանում Շուեդիայի կարլոս ԺԱ. Թագաւորի (1660-1697) անձնական ներկայացուցիչ Հենրիկոս Բրեննէրին (Henric Brenner), անձ, որի անունն ու գործի հետ են կապուած Խորենացիագիտութեան այնքան չատ առեղծուածներ, թիւրըմբռնումներ եւ թիւրիմացութիւններ:

Նկատի ունենալով այն, որ հայագիտութեան բնագաւառում Հենրիկոս Բրեննէրի անձն ու գործը, ըստ էութեան, անծանօթ հանգամանքներ են⁴, եւ որպէս այդպիսին հայագիտութեան չհատուցած պարտքերից մէկը, անհրաժեշտ համարեցինք առաջին անգամ լայնօրէն անդրադառնալ դրանց⁵:

Հենրիկոս Բրեննէրը ծնուել է 1669 Մեպտեմբեր 13ին, Շուեդիայի Էօսթերբոթթէն նահանգի Քրոնոբու բնակավայրում՝ հոգե-

ւորականի ընտանիքում: Նրա ծնողներն են եղել Եակոբուս Բրեն-
նէրն ու Բրիթա Գամալը: Սկզբնական կրթութիւնը ստացել է
ծննդավայրում, իսկ միջնակարգը՝ Աբօ քաղաքի գիմնազիայում:
Սովորել է Լունդի (1687-1690) եւ Ուփսալայի (1690-1691) համալ-
սարաններում: 1691 Դեկտեմբերի 4ին Ուփսալայի համալսարա-
նում պրոֆ. Լ. Նորմանի (L. Norrman) ղեկավարութեամբ պաշտ-
պանել է աւարտական թեզ⁶, իսկ միջանի օր անց՝ Դեկտեմբերի
10ին, նրան շնորհուել է արուեստից մագիստրոսի գիտական կո-
չում: Յետագայ տարիներին աստուածաբանական ու իմաստասի-
րական առարկաներ է դասաւանդել Ուփսալայի համալսարանում,
զբաղուել է արեւելագիտութեամբ, ուսումնասիրել լեզուներ: 1697ի
սկզբներին անակնկալ հրաւէր է ստացել Կարլոս ԺԱ.ից՝ դիւանա-
գիտական չափազանց կարեւոր յանձնարարութեամբ ուղեւորուելու
Պարսկաստան:

ժէ. դարի վերջերին Շուեդիան աշխուժ հետաքրքրութիւն էր
ցուցաբերում Պարսկաստանի նկատմամբ եւ պատահական չէ, որ
հենց Շուեդիայի նախաձեռնութեամբ է, որ երկու երկրների միջեւ
հաստատուում են դիւանագիտական ու առեւտրական ուղիղ կապեր:
Որպէս այդ հետաքրքրութիւնների վկայութիւն կարող է ծառայել
այն, որ շուեդական կողմը կարճ ժամանակամիջոցում մէկը միւսի
ետեւից դիւանագիտական զոյգ միսիաներ է ուղարկում Պարսկաս-
տան: Դեռեւս 1687ին շուեդական դեսպանորդ Լիւդուիգ Ֆաբրից-
իուսը (Ludwig Fabritius) կատարելով Կարլոս ԺԱ.ի յանձնարարու-
թիւնը՝ Սպահանում բանակցում էր Սուլէյման շահի (1666-1694)
հետ, որի արդիւնքը եղաւ երկու երկրների միջեւ առեւտրական
պայմանագրի կնքումը: Հետաքրքիր է, որ շուեդ դեսպանորդը
հայրենիք վերադարձաւ երկու հայ առեւտրականների ուղեկցու-
թեամբ, որոնք Ստոկհոլմում ջերմ ընդունելութեան արժանացան
թագաւորի կողմից⁷: Անշուշտ, Շուեդիան չէր առաջնորդւում մի-
այն տնտեսական-առեւտրական շահախնդրութիւններով: Պէտք է
ենթադրել, որ պարսկա-շուեդական բանակցութիւնները շօշափում
էին նաեւ քաղաքական խնդիրներ: Ըստ երեւոյթին, շուեդական
կողմը՝ յանձին Պարսկաստանի, ակնկալում էր տեսնել այն երկրին,
որը կարող էր դառնալ նրա հնարաւոր դաշնակիցը հետզհետէ ա-
հագնացող ռուս-շուեդական հակամարտութիւնում: Ահա նման ա-
ռաքելութեամբ էր, որ 1697ի կէսերին շուեդական դեսպանորդ
Լիւդուիգ Ֆաբրիցիուսը երկրորդ անգամ ուղեւորուեց Պարսկաս-
տան: Այս անգամ պատուիրակութեան կազմում ընդգրկուեց նաեւ
Ուփսալայի համալսարանի երիտասարդ դասախօս Հենրիկոս
Բրեննէրը: Մնում է միայն ենթադրել, թէ ո՛րն է եղել Բրեննէրի

դերը դեսպանութեան կազմում եւ ինչո՞վ էր պայմանաւորուած նրա մասնակցութիւնը այդ յուժ կարեւոր առաքելութեանը: Մի-գուցէ արեւելեան լեզուների իմացութիւնը: Իրօք, Բրեննէրի կենսագիրը հաւաստում է «արեւելեան լեզուների, մասնաւորապէս արաբերէնի», նրա հիւանալի իմացութիւնը: «Արեւելեան լեզուներ» արտայայտութիւնը, բացի արաբերէնից, ենթադրում է նաեւ այլ լեզուների, հաւանաբար նաեւ պարսկերէնի իմացութիւն: Կարծում ենք, սխալուած չենք լինի ասելու, որ Բրեննէրը եղել է դեսպանութեան թարգմանը, որը Պարսկաստանում եղած իր ժամանակը գուցորդել է նաեւ գիտական, մասնաւորապէս արեւելագիտական զբաղմունքներով: Սոյն իրողութիւնը, առանց որեւէ դժուարութեան, կարելի է փաստել հենց Բրեննէրի հաղորդած տուեալների օգնութեամբ: Պարզում է, որ նա յանձնարարութիւն ունէր Ուփսալայի ակադեմիայի գրադարանապետ, աստուածաբանութեան դոկտոր էրիկ Բենցէլից (Eric Benzel) եւ վերջինիս միջնորդութեամբ նաեւ գերմանացի հանրայայտ գիտնական Գոտֆրիդ Վիլհելմ ֆոն Լէյբնիցից (Leibniz) մանրամասն ուսումնասիրելու Պարսկաստանի եւ Մոսկուայի միջեւ բնակուող ժողովուրդների պատմութիւնն ու լեզուն, սովորութիւնն ու կենցաղը: Այդ կապակցութեամբ նա գրում է. «Փրբ 1699ին վերադառնում էի Պարսկաստանից, ինձ յանձնեցին քո, ո՞վ ազնուագոյն այր (խօսքը Բենցէլի մասին է - Պ. Թ.) նամակը, որի մէջ դու խնդրում էիր, որպէսզի ես մանրամասն ուսումնասիրեմ որոշ բաներ, որոնց վրայ քո ուշադրութիւնը հրաւիրել էր երեւելի (summus) այր Գոտֆրիդ Վիլհելմ Լէյբնիցը, յատկապէս որպէսզի չանտեսեմ Պարսկաստանի ու Մոսկուայի միջեւ բնակուող տարբեր ազգերի բառերը, որտեղից թերեւս հնարաւոր լինէր դուրս բերել բազմաթիւ ցեղերի անուանումներ: Եւ չնայած ես նախկինում էլ այդ բանն արդէն անում էի, դրանից յետոյ սկսեցի անել աւելի ջանասիրաբար, որպէսզի գոնէ մի կերպ բաւարարեմ քո եւ պայծառափայլ (celebrimus) Լէյբնիցի ցանկութիւնը (ընդգծումը մերն է - Պ. Թ.)»⁸:

Շուեդական դեսպանութիւնն իր ճանապարհորդութիւնն սկըսեց 1697ի վերջերին: Այն Պարսկաստան էր ուղեւորում Ռուսաստանի վրայով: 1698 Փետրուարի 11ին պատուիրակները հասան Կազան, ուր որոշ ժամանակ ստիպուած էին կանգ առնել սաստիկ ցրտերի պատճառով: Անասելի զրկանքներ ու դժուարութիւններ յաղթահարելով՝ 1698 Մայիսի առաջին օրերին պատուիրակութիւնը հասաւ Աստրախան, որտեղից՝ Դերբենդի եւ Շամախու վրայով, ժամանեց Սպահան: Պարսկական կառավարութիւնը եւ անձամբ Հոսէյն Ա. շահ (1694-1722) եւս մեծ հետաքրքրութիւն

էին ցուցաբերում շուեղական դեսպանութեան եւ պարսկա-շուեղական բանակցութիւններ ի նկատմամբ: Շահն անձամբ էր հետեւում բանակցութիւնների ընթացքին եւ պատրաստակամութիւն յայտնում դեսպաններ փոխանակել երկու երկրների միջեւ: 1699 ի կէսերին շուեղական դեսպանութիւնը ետ է վերադառնում հայրենիք: Սակայն, Բրեննէրը անորոշ ժամանակով դեռեւս ստիպուած էր մնալ Սպահանում, քանզի յանձնարարութիւն ունէր Շուեղիա ուղեկցել պարսկական դեսպանորդ Սարուկ Խանբէկին (Sarug Chanbeg): Ի վերջոյ, 1700 ի գարնանը պարսկական դեսպանութիւնը Ռուսաստանի տարածքով ուղեւորուեց Շուեղիա: Հետաքրքիր է, որ Բրեննէրը առաջնորդուելով ինչ-ինչ հանգամանքներից՝ եւ ռանդուն համոզում էր դեսպանորդին, «հրաժարուել դրանից (ռուսական ուղուց - Պ. Յ.), քանի որ նրա համար ոչ մի լաւ բան չէի կանխագուշակում՝ ելնելով Պարսկաստանի եւ Ռուսաստանի միջեւ արդէն այդ ժամանակ սաստկացող թշնամանքից»⁹, եւ Շուեղիա ուղեւորուել Օսմանեան կայսրութեան տարածքով: Սակայն Սարուկ Խանբէկը շահից խստագոյն հրահանգ ունէր չչեղւել ռուսական ուղուց, ուստի մերժեց Բրեննէրին եւ պարսկական դեսպանութիւնն ընտրեց դէպի հիւսիս տանող ծանօթ հին առեւտրական ճանապարհը¹⁰:

Ճանապարհն անցնում էր Հայաստանով ու Կովկասով եւ Բրեննէրը հիանալի առիթ ունէր «մանրակրկիտ կերպով ուսումնասիրելու Հայաստանի, Վրաստանի, Դաղստանի եւ Զերքեզիայի պատմական յուշարձաններն ու պատմութիւնը, ծանօթանալու այդ տարածքաշրջանի կացութեանը»¹¹, հանգամանք, որն ինչպէս արդէն նշեցինք, մտնում էր նրա անմիջական հետաքրքրասիրութիւնների շրջանակի մէջ:

Պատուիրակութիւնը դեռեւս գտնւում էր Մոսկուայում երբ 1700 Օգոստոսի 19 ին բռնկուեց ռուս-շուեղական պատերազմը (1700-1721): Ռուսական իշխանութիւններն անմիջապէս ձեռքաւակցեցին Բրեննէրին եւ լրտեսութեան կեղծ մեղադրանքով բանտարկեցին: Ամբողջ 21 տարի Բրեննէրը արգելափակուած մնաց ռուսական տարբեր բանտերում՝ հիմնականում Կազանում: Աւելի ուշ, ինչպէս գրում է կենսագիրը՝ «մի ենթասպայի եւ վեց զինուորի հսկողութեան ներքոյ» նրան տեղափոխում են Մոսկուա: Յետագայում, յիշելով իր այս զարմանալի ողբիսականը, Բրեննէրը խՈ՛րին ափսոսանքով գրում է. «որքա՛ն կոյր է մարդկային միտքը... եւ այսպէս ես ժամանակ կորցրեցի եւ ժամանակի հետ միասին կործանեցի իմ բախտը»¹²: Պէտք է ենթադրել, որ Բրեննէրի բանտարկելութեան պայմաններն այնքան էլ խիստ չեն եղել, քանզի

նա ազատ հնարաւորութիւն ունէր զբաղուելու նաեւ գրական ու գիտական աշխատանքներով: Յատկանշական է, որ նա Մոսկուայում յաճախակի շփուել եւ հանդիպումներ է ունեցել ռուս նշանաւոր պատմաբան Վասիլի Նիկիտիչ Տատիշչեւի հետ¹³, որին էլ ծանօթացրել է իր գիտական աշխատանքներին եւ մասնաւորապէս խորենացու վերաբերեալ նոթերին:

Աւելի քան քսանամեայ արգելափակումից Բրեննէրն ազատւեց միայն Նիշտադեան հաշտութեան պայմանագրի կնքումից (1721 Օգոստոսի 30) յետոյ: 1722ի սկզբներին նա, «քայքայուած առողջութեամբ, հիւանդ եւ հիւժուած»¹⁴, իրաւունք է ստանում վերադառնալ հայրենիք: Կարճատեւ հանգստից ու կազդուրուելուց յետոյ Բրեննէրն իրեն ամբողջութեամբ նուիրում է գիտական ու դասախօսական աշխատանքներին: 1722ի Յունիսի 19ին նրան շնորհւում է պրոֆեսորի կոչում, որն իրաւունք էր տալիս դասաւանդելու բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում: Նոյն թուականի Դեկտեմբերի 19ին Շուեդիայի Թագաւոր Ֆրիդրիխ Ա. Հասնցու (1720-1751) յատուկ հրամանագրով նշանակուած է հնութիւնների արխիւի (antikvi tetsarkivet) խորհրդական: 1723ի Մայիսի 17ից վարում է Թագաւորական գրադարանի տնօրէնի պաշտօնը¹⁵: Յատկանշական են նրա փորձերը գրադարանային գործը գիտական բարձր հիմքերի վրայ դնելու ուղղութեամբ: Նրա հետեւողական ու յամառ ջանքերի շնորհիւ Թագաւորական գրադարանը համալրուեց արեւելեան բազմաթիւ հագուագիւտ ձեռագրերով եւ արեւելագիտական ճոխ գրականութեամբ: Ըստ էութեան, նրա անուան հետ է աղերսւում արեւելագիտական, մասնաւորապէս հայագիտական, համակարգի հիմնադրումը Շուեդիայում: Շուեդական կառավարութիւնը (kanslikollegiet) բարձր գնահատելով Բրեննէրի ծառայութիւնները՝ 1724ին յատուկ ուղերձով դրուատում է նրա «եռանդն ու ընդունակութիւնները, որ նա գործադրում է իր պաշտօնավարութեան ընթացքում»¹⁶:

Բրեննէրը մահացել է 1732ի Օգոստոսի 29ին¹⁷, Ստոկհոլմում:

Մեծ չէ Բրեննէրի գիտական ժառանգութիւնը: Բացի վերոնշւած թեզից եւ խորենացու Հայոց պատմութեան համառօտուած թարգմանութիւնից, նրա հեղինակութեամբ տպագրուել են մի ուսումնասիրութիւն՝ նուիրուած Պետրոս Մեծի պարսկական արշաւանքի նկարագրութեանը¹⁸ եւ մի քանի նամակներ՝ ուղղուած էլիւսա Բրեննէրին (Աստրախան, 1698, 3 Մայիսի)¹⁹: Բրեննէրը գործօն նպաստ է ունեցել նաեւ պրոֆ. Ֆ. Հ. Շտրահլենբերգի պատմա-աշխարհագրական բնոյթի երկասիրութեան՝ կովկասեան ժողովուրդների լեզուաընտանիքների մասին հատուածները պատրաստելու

աշխատանքներին²⁰ : Հեղինակակից է նոյն հեղինակի հրատարակած Ասիայի քարտեզի կառավից ծովի եւ Սիր-Դարիա գետի տարածաշրջանի նկարագրութեան²¹ :

Այսպիսն է Բրեննէրի գիտական ժառանգութեան ընդհանուր նկարագիրը: Կարծում ենք տարակուսելի չպէտք է համարել նման պատկերը, նկատի ունենալով նրա քսանամեայ բանտարկութեան եւ ապա վարչական գերզբաղուածութեան իրողութիւնները: Թերեւս նրա ինչ-ինչ ձեռագրեր կարող են պահպանուած լինել չուեղական գրադարաններում եւ արխիւներում:

EPITOME
COMMENTARIORUM
MOYSIS ARMENI,
^{DE}
ORIGINE & REGIBUS
ARMENORUM
^{ET}
PARTHORUM,
^{ITEM}
SERIES PRINCIPUM
IBERIÆ
^{ET}
GEORGIAE,
CUM NOTIS & OBSERVATIONIBUS
HENRICI BRENNERI,
Accessit ejusdem EPISTOLA *Ad plur. reverend. & celeberrim.*
Doct. ERICUM BENZELIUM
DE PRÆSENTI STATU QUARUNDAM
GENTIUM ORIENTALIUM.

STOCKHOLMIAE,
Typis ac impensis JOH. LAURENT. HORRN,
Reg. Antiq. Arch. Typogr. Anno MDCCXXIII.

Հայագիտութեան համար Բրեննէրի գիտական ժառանգութեան ամէնանշանակալից արժէքը անշուշտ, Խորենացու, Պատմութիւն հայոցի համառօտագրուած լատիներէն հրատարակութիւնն է, որ նա հարուստ ծանօթագրութիւններով եւ Խորենացու անձի ու գործի հետ որեւէ աղերս չունեցող պատմական առանձին դիտումներով հանդերձ, լոյս ընծայեց գերութիւնից վերադառնալուց անմիջապէս յետոյ, Ստոկհոլմում՝ 1723 ին²²։ Թէեւ սոյն թարգմանութիւնը լոյս էր տեսել եւրոպական արեւելագիտական կենտրոններից շատ հեռու, սահմանափակ տպաքանակով, սակայն քննադատական միտքը անմիջապէս արձագանգեց ու արժէքաւորեց կատարուած աշխատանքը։ Եւրոպական հեղինակաւոր քննադատական տարեգրքերում տպագրուեցին մի շարք ընդհանրացնող, դրուատալից գրախօսականներ²³։

Տպագրուելուց անմիջապէս յետոյ, արդէն 1730-ականներին, այս հրատարակութիւնը յայտնուեց է շրջանառութեան մէջ։ Այն օգտագործուեց է։ Նրանից մէջբերումներ են կատարում մասնագիտական գրականութեան մէջ։ Յատկանշական է, որ գրքի մի եզակի օրինակ 1726 ին, ինչպէս ենթադրուեց է Ռոբերտ Հ. Խաչատրեանը, Ստոկհոլմից իր հետ Ռուսաստան է բերում ռուս նշանաւոր պատմաբան Տատիշչենը²⁴։ Գրքի այդ օրինակը գտնուեց էր Մոսկովայի Ռումիանցեւեան Գրապահոցում (այժմ՝ Ռուսաստանի Պետական Գրադարան)։ Ռուս արեւելագետ Թէոֆիլ Զիգֆրիդ Բալքը, որ մահացել է 1738 ին, Ռուսաստանի աշխարհագրութեանը նուիրուած իր մենագրութիւնում արեւելեան հին ժողովուրդների մասին տեղեկութիւններ յայտնելիս յղում է Խորենացու բրեննէրեան հրատարակութեանը²⁵։ Մէկ այլ ռուս պատմաբան՝ Ի. Մ. Ստրիտտէրը, խազարների մասին աշխատանք գրելիս, լայնօրէն օգտագործել է, ինչպէս ինքն է յորջորջում՝ «Մոզէս Ֆոն Խորենացի», բրեննէրեան հրատարակութիւնը²⁶։ Անշուշտ, նշուածով չեն սահմանափակուած բրեննէրեան հրատարակութեան արձագանգները, սակայն, որպէս կանոն, այն լայն տարածում չստացաւ։ Բնորոշ հանգամանք է, որ Հ. Միքայէլ վրդ. Չամչեանցը արժէքաւորելով Վիստոնների թարգմանութիւնը²⁷, անգամ ակնարկ չի անում բրեննէրեան հրատարակութեան վերաբերեալ, որն, անշուշտ, հետեւանք էր նշանաւոր հայագետի անտեղեկութեան։ Իսկ շատ ուսումնասիրողներ էլ, որ հնարաւորութիւն չունէին անձամբ տեսնելու եւ ուսումնասիրելու այն, գրքի մասին խօսել են թէականօրէն, յաճախ՝ միջնորդաւորուած, իսկ երբեմն էլ կասկածելի են համարել ընդհանրապէս նրա գոյութիւնն իսկ։ Այսպէս, հմուտ Խորենացիագետ Ստեփան Մալխասեանցը գրում է. «Լատիներէն թարգմա-

նութիւն Բրեննէրի, տպագրուած Ստոկհոլմում, սակայն այս թարգմանութիւնը ոչ մի մատենադարանում չկայ եւ նրան ոչ ոք չի տեսել»²⁸։ Արեւմտեան հայագիտութեան արժէքներին քաջածանօթ Գ. Շրոմպֆը նոյնպէս տատանւում է որեւէ առարկայական գնահատական կատարելուց, քանզի խոստովանում է. «Մենք այս երկասիրութեան *անուամբ* (ընդգծումը մերն է - Պ. Թ.) եւեթ ծանօթ ըլլալով, առայժմ չենք կարող աւելի ընդարձակ տեղեկութիւն մը տալ՝ յառաջաբանին եւ ծանօթութեանց պարունակութեան,- եւ ուսումնասիրողներին խորհուրդ է տալիս՝ փափաքելի է, որ Բրեննէրի թարգմանութիւնը փնտռուի ի մատենադարանս Փարիզի, Լոնտոնի եւ մանաւանդ երկասիրողին հայրենեաց (այսինքն՝ Շուեդիայում - Պ. Թ.) եւ բանասիրաց հաղորդուի»²⁹։

Յատկապէս շփոթութեան տեղիք է տուել բրեննէրեան հրատարակութեան տարեթուի հանգամանքը։ Շատերը բերելով նախորդ ուսումնասիրողների մօտ արդէն առկայ թիւը թուականը եւ հնարաւորութիւն չունենալով անձամբ ստուգելու այն, կրկնելով մէկը միւսին, հրատարակութեան տարեթիւ են համարել 1733ը³⁰, խորենացիագէտ Ռոբերտ Թոմսոնը՝ 1724ը³¹։ Իսկ մատենագէտ Արմենակ Սալմասլեանը երկու տարբեր հրատարակութիւններ է նշում՝ 1723 եւ 1733ը³²։ Վերջինն, անշուշտ, թիւրիմացութիւն է եւ հետեւանք՝ չըջանառութեան մէջ գտնուող, արդէն կարծրացած եւ բազմիցս կրկնուած սխալի։

Անշուշտ, այժմ այլեւս որեւէ տարակուսանքի տեղիք չի տալիս Բրեննէրի հրատարակութեան իրողութիւնը, իսկ գրքի եզակի օրինակներից մէկի հետ կարելի է ծանօթանալ Մաշտոցեան Մատենադարանի գրադարանում։ Սակայն անծանօթ են մնում թարգմանութեան հանգամանքները եւ բուն թարգմանութեան հետ կապուած բազմաթիւ խնդիրներ, որոնք կը փորձենք ներկայացնել ստորեւ։

*

* *

Հայագիտութեան մէջ կրկնուող տեսակէտերից մէկի համաձայն Բրեննէրը խորենացու Պատմութիւնը լատիներէն է թարգմանել ակամայ գերութեան տարիներին։ Իբր այդ միջոցին է նա ծանօթացել իր բախտակից Դոմինիկեան հոգեւորական Յովհաննէս Բարթոլոմէոսի (Joannes Bartholomeus) հետ, որը նախապէս պաշտօնավարելով Հայաստանում եւ Պարսկաստանում՝ հայերէն էր սովորել եւ ինքնուրոյն թարգմանութիւններ էր կատարում հին հայկական բնագրերից։ Նշուած կրօնաւորն իր հետ ունեցել է խորենացու Պատմութեան մի գրչագիր, որից նա Բրեննէրի համար

Թարգմանաբար հատուածներ էր ընթերցում համատեղ բանտարկութեան երկարուձիգ օրերի ընթացքում: Ժամանակի ընթացքում Բրեննէրը նոյնպէս սովորում է հայերէն, կատարում ինքնուրոյն թարգմանութիւններ եւ Բարթոլդիմէոսի օգնութեամբ համառօտում խորենացու Պատմութիւնը, իսկ Ստոկհոլմ վերադառնալուց յետոյ՝ 1733ին (sic) լոյս ընծայում այն: Այս վարկածն առաջ է քաշել դեռեւս ֆրանսիացի հայագէտ Վիկտոր Լանգլուան 1869ին³³: Այն մեխանիկաբար կրկնուել է յետագայ³⁴ եւ անգամ մերօրեայ³⁵ ուսումնասիրողների կողմից: Տարակոյս չկայ որ Լանգլուան եւ նրան հետեւողներից եւ ոչ մէկը անձամբ չեն տեսել Բրեննէրեան հրատարակութիւնը: Հակառակ դէպքում, ոչ միայն չէին շփոթի գրքի հրատարակութեան թուականը, այլեւ հաշուի կ'առնէին իր՝ Բրեննէրի յստակ վկայութիւնները թարգմանութեան հանգամանքների վերաբերեալ: Այսպէս, Պ. Ֆեթթէրը գրում է. «Խորենացու Պատմութեան առաջին (թէեւ ոչ լիակատար) լատիներէն թարգմանութիւնը լոյս տեսաւ խոր հիւսիսի մէջ, Ստոկհոլմում 1733ին (sic) Հենրիկոս Բրեննէրի ձեռքով, որը Յովհաննէս Բարթոլդիմէոս Դոմինիկեանի հետ Մոսկուայի բանտի մէջ Մովսէսի առանձին հատուածներ փոխադրեց լատիներէնի»³⁶: Նոյնը, առանձին շեղումներով, գրում է նաեւ Հ. Գարեգին վրդ. Զարեհանալեանը. «Խորենացիի առաջին թարգմանիչն եղած է Պրեննէր անունով շուեղացի մը, որ... քաղաքական պատճառով մը Ռուսաց Մոսկուա քաղաքին մէջ արգելուած էր ի բանտի: Հոն իրեն քով բանտակից եւ կենակից ունեցաւ Յովհաննէս Բարթոլդիմէոս Յակինթեան Դոմինիկեան կրօնաւորը, տեղեակ հայերէն լեզուի ուր ձեռունին իյնալով խորենացոյն այս պատմական երկասիրութիւնը, հայագէտ կրօնաւորը քաղելով կամ համառօտելով կը թարգմանէր ի լատին, եւ Պրեննէր ծանօթութեամբ կը ճոխացնէր, եւ զոր ետքը տպագրեց Ստոքհոլմի մէջ»³⁷:

Դժուար է ասել, թէ ինչն է հիմք հանդիսացել նման տեսակէտի հանդէս գալուն: Մանաւանդ նոյն Բրեննէրի կողմից խորենացու լատիներէն համառօտութեանը կից հրատարակուած Յովհաննէս Բարթոլդիմէոսի նամակը³⁸ փաստում է միանգամայն այլ իրողութիւն: Նամակում յստակօրէն մատնանշուած է, որ Բրեննէրը դեռեւս Սպահանում եղած ժամանակամիջոցում է (1698 Յունիս-1699 Յուլիս) ծանօթացել այստեղ պաշտօնավարող պրեդիկատորների Սրբ. Յակինթեան օրդէնի անդամ Բարթոլդիմէոսի հետ: Սա, բացի քարոզչութիւնից, զբաղւում էր նաեւ գիտական աշխատանքներով, քաջատեղեակ էր հայերէնին եւ հին հայկական բնագրերից կատարում էր թարգմանութիւններ: Դեռեւս Հռոմում՝ Սրբ.

Սաբինայի վանքում եղած ժամանակ այս կրօնաւորը սկսել էր համառօտել խորենացու Պատմութիւնը եւ թարգմանել լատիներէն (ըստ երեւոյթին Վանանդեցիների օրինակից): Հռոմում սկսած թարգմանութիւնը Բարթոլղիմէոսը շարունակում է Սպահանում, որտեղ այդ աշխատանքներին մասնակից է դարձնում նաեւ շուէդ դիւանագէտ Բրեննէրին: Որ նրանք համատեղ են շարունակել նշուած թարգմանութիւնը երեւում է Բրեննէրին ուղղուած Յովհաննէս Բարթոլղիմէոսի 1699 Սեպտեմբերի 2ի նամակի հետեւեալ տողերից. «...ինչ վերաբերում է մեր գործին (ընդգծումը մերն է - Պ. Յ.), Յուլիսին քեզ գրած մէկ այլ նամակում ես տեղեկացրել էի, որ արդէն համարեաւ աւարտել եմ, հայ ժողովրդի ու թագաւորների ծագման մասին համառօտ տեղեկագրութիւնը որը մտադիր էի... ուղարկել քեզ՝ ուսումնասէրիդ՝, (ընդգծումները մերն են - Պ. Յ.): Բացի այդ, գրքում տպագրուել է նաեւ իր՝ Յովհաննէս Բարթոլղիմէոսի փոքրիկ յիշատակարանը, որտեղ նա խօսելով թարգմանութեան հանգամանքների մասին, յստակօրէն շեշտում է, որ այն աւարտել է Սպահանում՝ 1699ին՝: Նշուածից ակնյայտ է, որ խորենացու Պատմութիւնը համառօտել եւ լատիներէն է սկսել թարգմանել նախ Յովհաննէս Բարթոլղիմէոսը եւ ապա այն Սպահանում շարունակել Բրեննէրի օգնութեամբ, որը հայերէն կարող էր սովորել միայն այստեղ գտնուած միջոցին:

Թէ ո՛րն է Բրեննէրի բաժինը այսօր արդէն առկայ թարգմանութիւնում, դժուար է ասել, սակայն անկասկած նրա հեղինակութեանն են պատկանում թարգմանութեան բոլոր ծանօթագրութիւնները, որոնց մասին խօսք կը գնայ ստորեւ: Հետաքրքրութիւնից զուրկ չէ նաեւ այն փաստը, որ երբ Բրեննէրը Սարուկ Խանէկին ուղեկցում էր Շուեդիա, թարգմանութիւնը մնում է Սպահանում՝ Բարթոլղիմէոսի մօտ: Եւ միայն յետագայում, մինչեւ ռուս-շուեդական պատերազմի սկսուելը, արդէն Մոսկուայում գտնուող Բրեննէրը ստացաւ Սպահանից ուղարկուած սոյն թարգմանութիւնը: Դա տեղի է ունեցել հետեւեալ կերպ: Սպահանի կաթողիկ վիճակի առաջնորդ էլիաս (Elias) եպիսկոպոսը Մոսկուայի վրայով ճանապարհորդելու էր Հռոմ: Օգտուելով դրանից՝ Յովհաննէս Բարթոլղիմէոսը խորենացու թարգմանութիւնն ուղարկում է Մոսկուայում գտնուող Բրեննէրին, շեշտելով հետեւեալը. «Եթէ հնարաւորութիւն ունենամ արտագրելու Ասիայի համառօտ աշխարհագրական նկարագրութիւնը նոյն ուսեալ այր Մովսէսի մի գրքից (նկատի ունի Աշխարհացոյցը - Պ. Յ.)... դա էլ կ'ուղարկեմ քեզ»⁴¹: Սակայն իրադարձութիւնները ողբերգական ընթացք ստացան եւ այդ նոր նիւթերը «ստանալու յոյսը յօդա ցնդեց, քանի

որ ազնուագոյն ու ամենաուսեալ այրը (Յովհաննէս Բարթոլղիմէ-
ոսը - Պ. Յ.) սպանուեց մի անպէտք մարդու ձեռքով»⁴²։ Այս իրա-
դարձութիւնները տեղի են ունեցել Սպահանում, հետեւաբար
Բարթոլղիմէոսի Ռուսաստանում գտնուելու եւ Բրեննէրի հետ
նոյն բանտախցում արգելափակուելու թիւր տեսակէտը, որ այս-
քան երկար ժամանակ կրկնուում էր պատմագիտութեան մէջ, այժմ
սրբագրուում է։ Այսպիսով, Խորենացու Պատմութեան համառօտագ-
րութեան Բարթոլղիմէոսի լատիներէն թարգմանութիւնը Բրեննէ-
րին է ուղարկուել Սպահանից՝ էլիսա եպիսկոպոսի միջոցով, որը
նրան է յանձնուել Մոսկուայում, մինչեւ Բրեննէրի ձերբակալու-
թիւնը։ Որ արգելափակման 21 տարիների ընթացքում այդ
թարգմանութիւնը չի եղել Բրեննէրի մօտ՝ ակներեւ է էրիկ Բեն-
ցէլին ուղղուած նրա նամակի հետեւեալ տողերից. «Երբ Մոսկուա-
յում ինձ տարան ահաւոր բանտը, դրանք (թարգմանութիւնները -
Պ. Յ.) այլոց թւում մնացին իմ իրերի ու ծառաների մօտ, եւ երբ
նրանցից մէկն ուզեց ինչ-որ բան բերել ինձ այնտեղ, որտեղ ես
բանտարկուած էի, եւ չկարողացաւ տեղ հասնել, թողեց դրանք իմ
բարեկամի մօտ...։ Ի դէպ, Յովհաննէս Բարթոլղիմէոսի բուն ձե-
ռագիրը այլոց թւում ես ետ ստացայ այն ազնիւ մարդուց, որի
մօտ դրանք ի սկզբանէ թողել էր իմ ծառան»⁴³ (ընդգծումները
մերն են - Պ. Յ.)։ Հետեւաբար Շրումպֆի⁴⁴, Լէոյի⁴⁵ եւ այլոց
պնդումները, թէ՛ «այդ բանտարկութեան ժամանակ էլ նա (Բրեն-
նէրը - Պ. Յ.) թարգմանեց Խորենացու համառօտագրութիւնը լա-
տիներէնի», մեղմ ասած, որեւէ հիմք չունեն։ Քանզի, ինչպէս տե-
սանք, Բրեննէրի բոլոր ձեռագրերը գտնուում էին նրա մի «բարե-
կամի» մօտ։ Ահա այդ ձեռագրերն են, որ Ստոկհոլմ վերադառնա-
լուց յետոյ, ինչպէս յտակօրէն շեշտում է Բրեննէրը, աստուածա-
բանութեան դոկտոր էրիկ Բենցէլի, «յորդորների շնորհիւ շատ
համառօտ ծանօթագրութիւններով եւ հոգացի հրատարակել»⁴⁶։
Այս բոլորից յետոյ մնում է տարակուսել, թէ ինչու Ռոբերտ Խա-
չատրեանը եւ նրա հետեւողութեամբ է. Յակոբեանը էրիկ Բենցէ-
լին համարում են Խորենացու թարգմանիչներից մէկը. «Բրեննէրն
ու Բենցէլը առաջինն իրականացրին Մովսէս Խորենացու Հայոց
պատմութեան լատիներէն թարգմանութիւնը»⁴⁷։ Անհասկանալի է։
Մինչդեռ գրքի, "I nitio non..." բառերով սկսուող փոքրիկ առա-
ջաբանում իրեն "Tui Studiosissimus" յորջորջող Բրեննէրը, աւելի
քան յստակ, Բենցէլին համարում է սոսկ իր հովանաւորեալը եւ
ուրիշ ոչինչ։

Միւս թիւրիմացութիւնը, որ երբեմն-երբեմն արտայայտուել
է Խորենացիագիտութեան մէջ այն է, որ իբր բրեննէրեան հրա-

տարակուծիւնը խորենացու Պատմութեան լատիներէն ամբողջական թարգմանութիւնն է, ինչպէս օրինակ գրում են Հայկական Հանրագիտարանի հեղինակները. «Բրեննէրն առաջինն է, որ ամբողջութեամբ (sic) լատիներէնի է թարգմանել Մովսէս խորենացու «Հայոց պատմութիւնը» ծանօթագրութիւններով»⁴⁸: Իրականում խորենացու լատիներէն այս առաջին հրատարակութիւնը, ինչպէս արդէն նշուել է, համառօտագրուած թարգմանութիւն է: Դա յստակ ականերեւ է նախ գրքի խորագրից՝ «Հայերի եւ Պարթեւների ծագման եւ թագաւորների մասին: Հայ Մովսէսի տեղեկութիւնների համառօտութիւն» (Epitome commentariorum Moysis Armeni de origine et regibus Aemenorum et parthorum): Համեմատութիւնները ցոյց են տալիս, որ թարգմանիչը (կամ թարգմանիչները) համառօտել են խորենացու Պատմութեան Առաջին գիրքը՝ Գ. Գլխից մինչեւ Իե. Գլուխը⁴⁹ եւ երկրորդ գիրքն ամբողջութեամբ⁵⁰: Երրորդ գրքին չանդրադառնալը, թարգմանիչները վերագրում են ժամանակի սղութեանը, հաւաստելով, թէ յետագայում կը կատարեն նաեւ այդ բաժնի թարգմանութիւնը⁵¹: Համառօտագրութիւնները կատարուած են խիստ զգուշութեամբ ու ճշակով, տրուած են գլուխների հիմնական բովանդակութիւնը, իսկ որոշ բաժիններ բերւում են ամբողջական, տողացի թարգմանութիւններով, ինչպէս օրինակ Հայոց Վաղարշակ թագաւորի Թուղթը, կամ Աբգարի Թղթերը եւլն: Թէեւ սոյն թարգմանութիւնը ամբողջական ու անգամ հատուածական չէ, այնուհանդերձ, Բրեննէրը չափազանց պատասխանատուութեամբ է ծանօթագրել համառօտագրութեան (Note ad commentariolum de origine Armenorum) ուշադրութեան արժանի իւրաքանչիւր հատուած կամ անձնանուն, տեղավայր, թուական կամ իրադարձութիւն⁵²: Բրեննէրի շատ ծանօթագրութիւններ ունեն գիտական անուրանելի արժէք եւ վկայում են դրանց հեղինակի խորը եւ բազմակողմանի գիտելիքների, հին եւ վաղ միջնադարեան Հայաստանի, Անդրկովկասի երկրների պատմութեան եւ պատմական աշխարհագրութեան նրա քաջատեղեակութեան մասին:

Ծանօթագրութիւնների մանրամասն վերլուծութիւնը թողնելով յարմար այլ առիթի, միայն նշենք, որ սրանով Բրեննէրը եւրոպայում առաջինը դրեց խորենացու եւ նրա անմահ ստեղծագործութեան գիտական ուսումնասիրութեան հիմնաքարը: Հենրիկոս Բրեննէրը եւրոպական առաջին խորենացիագէտն է, իսկ Յովհաննէս Բարթոլոմէոսը՝ խորենացու առաջին թարգմանիչը:

Այսպիսով, ամփոփելով մեր ուսումնասիրութեան արդիւնքները, յանգեցինք հետեւեալ եզրակացութիւններին.

ա. Խորենացու Պատմութեան լատիներէն առաջին թարգմանիչը ոչ թէ Հենրիկոս Բրեննէրն է, այլ Յովհաննէս Բարթոլոմէոսը:

բ. Բրեննէրը մասամբ է միայն օգնել թարգմանութեան աշխատանքներին, սակայն ամբողջութեամբ նրա գրչին են պատկանում ծանօթագրութիւնները:

գ. Խորենացու Պատմութեան թարգմանութիւնը աւարտել է Սպահանում 1699ին:

դ. Բրեննէրը բանտարկութեան շրջանում (1700-1721) չի գրադրել Խորենացու Պատմութեան թարգմանութեամբ, իսկ Յովհաննէս Բարթոլոմէոսը երբեք չի եղել նրա բանտակիցը:

ե. էրիկ Բենցէլը որեւէ մասնակցութիւն չի ունեցել Պատմութեան թարգմանութեանը, այլ միայն յորդորել է այն տպագրել:

զ. Բրեննէրեան հրատարակութիւնը Խորենացու Պատմութեան ոչ թէ ամբողջական լատիներէն թարգմանութիւնն է, այլ միայն առաջին երկու գրքերի համառօտագրութիւնը:

է. Բրեննէրի հրատարակութիւնը լոյս է տեսել ոչ թէ 1733ին, այլ՝ 1723ին:

Վերոնշուածը արձակում է վաղեմութեան ժամկետը վաղուց կորցրած թիւրիմացութիւնների այն ամբողջ կծիկը, որ կար խորենացիագիտութեան այս մարզում: Չբացայայտուած են մնում միայն առանձին կէտեր, ինչպէս օրինակ Բարթոլոմէոսի անձնաւորութեան հետ կապուած հարցերը, որոնց լուծումը ապագայի խնդիր է:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Ազգաբանութիւն տոհմին Յարենթեան, Յօրինեցեալ ի Մովսիսէ Խորենացու, (յնոմեմ Վարդապետէ, եւ յոգներախտ Քերթողահօրէ, ի լոյս ածեալ՝ տպիւք եւ ծախիւք Թօմայ Վանանդեցու, Յամատէլօղամի, 1695:

² Մասնաւորապէս՝ Վիստոնեան թարգմանութիւնը՝ Mosis Chorenensis Historiae Armeniacae, Londini, 1736:

³ Խորենացու եւրոպական առաջին արձագանգներն ու գնահատականները՝ Մաթիւրէն Վէյսիէ Լա Գրոզի (La Groze) նամակներում՝ Thesaurus epistolicus Lacrozianus, t. 1-3, Leipzig, 1762-1764:

⁴ Բրեննէրի մասին առանձին ակնարկներ տես՝ V. Langlois, Collection des Historiens anciens et modernes de l'Arménie, t. 2, Paris, 1869, էջ 51-52. Կիւստու Առոթ Շրումպֆ, Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ-ԺԹ դար), Թարգմ. եւ լրց. Հ. Գարեգին Զարբանալիանի, Վենետիկ, 1895. Հ. Գարեգին Զարբանալիան, Պատմութիւն հայ դպրութեան, Վենետիկ, 1897,

էջ 372-373. Լէօ, «Հայոց պատմութիւն», *Երկերի ժողովածու*, Երրորդ հատոր, գիրք 2, Երեւան, 1973, էջ 588. Ա. Աբեղեան, «Սկանդինավեան հայաբնակներ», *Համագրային տարեգիրք*, Ա. տարի, Գահիրէ, 1936, էջ 248-254. Թ. Հիւսիսեան, «Հայերէն լեզուի մուտքը եւրոպական ուստաններէն ներս», *Ափս*, ամսագիր, Պէլլուսթ, 1955 (11րդ տարի), թիւ 2 (73), Փետրուար, էջ 61-62. Պ. Հ. Յովհաննիսեան, *Մովսէս Նորենացու մատենագիտութիւնը*, Երեւան, 1991, էջ 68. «Տմտ»՝ *Հնչակ Հայաստանի*, Բ. տարի, No. 6, 29 Նոյեմբեր, 1991, էջ 12 եւ լւր.:

⁵ Հնրիկոս Բրեննէրի կենսագրական տուեալները քաղել ենք հետեւեալ հրատարակութիւններից՝ M. O. Celsius, *Bibliothecae Regiae Stockholmensis historia*, Stockholm, 1751, էջ 188; E. L. Hydrén, *Specimen historico-literarium de fatis literaturae Orientalis in Svecia*, Stockholm, 1755, էջ 33. *Nouvelle biographie Générale*, tome septième, Paris, 1855, էջ 322. K. V. Zettersteen, «Henrich Brenner», *Svensk Biografisk lexikon*, sjätte bandet (6), Stockholm, 1926, էջ 214-217: Շնորհակալութեամբ լիցաւորուած ենք այն իրողութիւնը, որ շուկերէն նիւթերի հայերէն թարգմանութիւնները ժամանակին մեզ էր տրամադրել շուկահայ ծանօթագրային, ողբացեալ Պետրոս Զարդարեանը:

⁶ *De hebdomade feriata ex institutis gentium dissertatio philosophica*, Stockholm, 1691, 50 էջ:

⁷ *Ded mangkulturella Sverige*, red. J. Svanberg, H. Runblum, Stockholm, 1988, էջ 21:

⁸ *Epitome commentariorum Moysis Armeni de origine et regibus Armenorum et Parthorum*, Stockholmiae, 1723, էջ 92: Հնրիկոս Բրեննէրի լատիներէն նամակը էրիկ Բենցէլին հմտութեամբ հայերէն է թարգմանել, ծանօթագրել եւ հրատարակել բանասիրութեան թեկնածու Գոհար Մուրադեանը («Ուշ միջնադարի շուկէ հեղինակը կողկասի եւ Ռուսաստանի ժողովուրդների մասին», *Իրան-նամէ*, 1995, թիւ 6-1996, թիւ 1 (16-17), էջ 22-29): Եղուածում մէջբերումները կատարուած են սոյն թարգմանութիւնից:

⁹ Մուրադեան, էջ 23:

¹⁰ Ի դէպ, հետաքրքրութիւնից գուրկ չէ այն, որ հնուց ի վեր «հայկական» յորջորջուող այս ճանապարհով է, որ հայ առաջին առեւտրականները թափանցեցին Շուկերի (ԺՁ. դար): Մեզ հետաքրքրող ժամանակներին է վերաբերում հայ-շուկական առեւտրա-տնտեսական պայմանագրի կնքումը (1688), որի համաձայն Նոր Զուղայի առեւտրականները պէտք է մետաքս ներմուծէին Շուկերի: 1696ին հայերը Շուկերի եւ հասցրել 1794 փութ, իսկ 1697ին՝ 873 փութ մետաքս (Ա. Բախչինեան, *Հայ-շուկական առեւտրութիւնները*, Ուփսալա, 1997, էջ 6): Հայ-շուկական առեւտրա-տնտեսական կապերի մասին տես նաեւ՝ Վ. Բալլերդեան, *Համաշխարհային առեւտուրը եւ իրանահայութիւնը* 17րդ դարում, Թեհրան 1996, էջ 138-193:

¹¹ Zettersteen, էջ 216:

¹² Մուրադեան, էջ 23:

¹³ Տատիշչեւի եւ Բրեննէրի լարաբերութիւնների մասին մանրամասն տես հետեւեալ հրատարակութիւնները՝ P. Pekarskaia, «Novie izvestiia o V. N. Tatishcheva» [Նոր տեղեկութիւններ Վ. Ն. Տատիշչեւի մասին], *Zapisi imperatorskogo akademii nauk*,

- հատ. 4, 1864, էջ 15. N. Popov, *Uchenie I literaturnie trudi Tatishceva* [Տատիշչեի գիտական եւ գրական աշխատանքները], Ս. Պետերբուրգ, 1866, էջ 8. A. I. Iukht, "Iz nasledia V. N. Tatishceva" [Վ. Ն. Տատիշչեի ժառանգութիւնից], *Istoriia I istoriki, Մոսկուա*, 1975, էջ 298-299:
- ¹⁴ Zettersteen, էջ 215:
- ¹⁵ Նոյն, էջ 214:
- ¹⁶ Նոյն, էջ 215:
- ¹⁷ Բրեննէրին նուիրուած մեր ակնարկում սխալմամբ տպագրուել է 1723 (տես Պ. Բովհաննիսեան, էջ 68), հմտ.՝ *Հնչակ Հայաստանի*, 29 Նոյեմբերի 1991, էջ 12:
- ¹⁸ "Unterthäniges memorial betreffend die letzte Kriegs-Expedition des Czaaren wieder Persien. Präsentire im Kgl. schwedischen Canteley-Collegio an. 1722", J. G. Rabener, *Leben Petri des Ersten und Grossen*, Leipzig, 1725, էջ 711-719:
- ¹⁹ "Dessutom utdrag ur ett brev till Elias Brenner", *Den sv. Mercurius*, nov. (11), Stockholm, 1757, էջ 568-570; "Och Ad patrulem Elias Brennerum epistola, an. 1699 in Asia ad Montem Caucasum scripta", *Nova lit. maris Balthici et Septentrionalis*, 1700, էջ 370-372:
- ²⁰ P. J. von Strahlenberg, *Das nord-und ostliche theil von Europa und Asia... in einer historisch-geographischen beschreibung... vorges. tellt*, Stockholm, 1730, էջ 71. հմտ.՝ *Nouvelle biographie Générale*, t. Sèptieme, էջ 322:
- ²¹ Aug. Strindberg, "Philipp Johann von Strahlenberg och hans karta öfver Asien", *Sv. Sällskapet f. antropol o. geogr., Geogr. Sekt. Tidskr.*, 1879, No.6:
- ²² *Epitome commentariorum Moysis Armeni, de origine et regibus Armenorum et Parthorum item series principum Iberiae et Georgiae, cum notis et observationibus Henrici Brenneri*, Stockholmiae. Anno MDCCXXXIII (1723): Սոյն գիրքը, բացի Մովսէս Խորենացու Պատմութեան լատիներէն համառոտագրուած թարգմանութիւնից եւ Ծանօթագրութիւններից, պարունակում է նաեւ հետեւեալ հատուածները՝ "Series regum sive principum Iberiae" (էջ 27-42), "Index conventuum et ecclesiarum" (էջ 43-47), "Note ad seriem principum Georgiae et Iberiae" (էջ 75-90) եւ երկու նամակներ (Բովհաննէս Բարթոլդիմէոսի 11 Սեպտեմբերի 1699 թուակիր նամակն ուղղուած Բրեննէրին եւ վերջինիս 8 Հոկտեմբերի 1723 թուակիր նամակն ուղղուած Բենցէլին, էջ 91-108): Ամբողջ գիրքն ունի ընդամէնը 108 էջ:
- ²³ *Acta eruditorum Lipsiensium ab an. 1682, 1724*, t. 43, էջ 436-439. նաեւ՝ *Acta Literaria Sueciae*, 1727, էջ 457 եւ ընդ:
- ²⁴ R. G. Khachatryan, "K nasledii V. N. Tatishceva" [Վ. Ն. Տատիշչեի գիտական ժառանգութեան շուրջ], *Հրաբեր հասարակական գիտութիւնների*, 1976, No. 3. հմտ. նաեւ նոյնի *Russkaia istoricheskaja misl I Armeniia (XVII-nachalo XIXvv.)* [Ռուսական պատմական միտքը եւ Հայաստանը, (17-18րդ դարի սկիզբ)], Երեւան, 1987, էջ 226:
- ²⁵ F. Z. Bauer, *Geografiia rosiiskai* [Ռուսաստանեան աշխարհագրութիւն], Ս. Պետերբուրգ, 1767, էջ 10:
- ²⁶ I. M. Stritter, *Meschtsoslov istoricheskii I geograficheskii* [Տոմար պատմական եւ աշխարհագրական], Ս. Պետերբուրգ, 1776, էջ 97:

- ²⁷ Հ. Միքայել վրդ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչեւ
ցամ տեառն 1784, հատ. Ա. Վենետիկ, 1784, էջ 13:
- ²⁸ Մովսէս Խորենացի, Հայոց պատմութիւն, Թարգմանութիւն, ներածութիւն եւ ծա-
նոթագրութիւններ Դովտոր Ստ. Մալխասեանի, Երեւան, 1940, էջ XC:
- ²⁹ Շրումաֆ, էջ 46:
- ³⁰ Մանաւորապէս տեա Langlois, էջ 51. «Հայ պատմագրների երկասիրութեանց ցու-
ցակը» (յաւելուած Պրոֆ. Բ. Պատկանեանի «Համառօտ տեսութիւն հայ պատմակ.
գրականութեան» յօդուածին), Փորձ, Չորրորդ տարի, Եռնուար, Տփլիս, No.1,
1880, էջ 10. Մովսէս Խորենացի, Հայոց պատմութիւն, աշխարհաբար Թարգմա-
նեց եւ լուսաբանեց Խորեն եպիսկ. Ստեփանէ, (Հիմնովին սրբագրուած եւ բարե-
փոխուած Բ. տպագրութիւն), Ս. Պետերբուրգ, 1897, էջ Հ. Պ. Ֆեթթէր, Հարկա-
կան աշխատասիրութիւնք հայագէտ Պ. Ֆեթթէրի, ի մի ամփոփուած եւ Թարգ-
մանուած հանդերձ ծանոթագրութեամբք ի Հ. Յակովբայ վ. Տաշեան, Վիեննա
1895, էջ 104. Հ. Գարեգին Զարեհնալեան, Հարկական մատենագիտութիւն (Այ-
բուղեական ցուցակ տպագրութեան գիւտէն մինչեւ առ մեզ եղած հայերէն հրա-
տարակութեանց), Վենետիկ, 1883, էջ 270. Մովսիսի Խորենացու Պատմութիւն
Հայոց, աշխատութեամբ Մ. Արեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփլիս, 1913, էջ Ծ.
Հ. Արսէն Ղազիկեան, Հարկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան
հայ կեանքի, հատ. 1, Վենետիկ, 1909-1912, սիւնակ 2053. Ստ. Մալխասեան, էջ
XC. Սրբուհի Հայրապետեան, Հայոց հին եւ միջնադարեան գրականութեան
պատմութիւն, Անթիլիաս, 1988, էջ 199. Հ. Խաչատրեան, Հանրագիտակ օրացոյց,
Երեւան, 1989, էջ 58. "Inventaire des sources arméniennes sur l'histoire
Balkanique", D'après le catalogue des manuscrits arméniens de la congrégation des
méchitaristes-Vienne. Inventaire par Agop Ormandjan avec le concours de Raïa
Zaïmova, Red. Prof. V. Tapkova-Zaïmova, Sofia, Centre international d'information
sur les sources de L'Histoire Balkanique et Méditerranéenne: "Cibal", 1980, էջ 39:
- ³¹ Moses Khorenats'i, *History of the Armenians*, Translation and commentary of the
literary sources by Robert W. Thomson, Cambridge, 1978, էջ 7:
- ³² Ա. Սալմասեան, Հարկական մատենագիտութիւն, ամբողջութեամբ վերանայուած եւ
զգալիօրէն աւելացուած նոր հրատարակութիւն, Երեւան, 1969, էջ 60, 101:
- ³³ Langlois, էջ 51-52:
- ³⁴ Մանաւորապէս՝ Խորեն Ստեփանէ, էջ հա-հբ:
- ³⁵ Annie et Jean-Pierre Mahé, *Histoire de L'Arménie par Moïse de Khorène*, Callimard,
1993, էջ 16:
- ³⁶ P. Vetter, *Moses von Choren*, տեա՝ Nirschl, *Patrologie und Patristik*, Mainz, 1883,
Bd. III, պար. 245-247. հմտ.՝ Ֆեթթէր, էջ 104:
- ³⁷ Զարեհնալեան, Հայ հին դպրութեան պատմութիւն, էջ 372-373:
- ³⁸ Epitome, էջ 91-92. տեա նաեւ նամակի հայերէն Թարգմանութիւնը եւ
ծանոթագրութիւնները՝ Մուրադեան, էջ 23:

- ³⁹ Epitome..., էջ 92. Հմմտ.՝ Մուրադեան, էջ 23;
- ⁴⁰ Aspahani d. 20. Aprilis, 1699, էջ 23. Հմմտ. նաև էջ 43;
- ⁴¹ Մուրադեան, էջ 23;
- ⁴² Նոյն
- ⁴³ Նոյն
- ⁴⁴ Շրմագֆ, էջ 45-46. Հմմտ.՝ Զարբհանալեան, Հայ հին ..., էջ 372;
- ⁴⁵ Լէօ, Երկերի ժողովածու, հատ. 3, գիրք երկրորդ, էջ 588;
- ⁴⁶ Մուրադեան, էջ 23;
- ⁴⁷ R. Khachatryan, Russkaia istoricheskaja misl, էջ 13. Հմմտ.՝ E. A. Akopian, Armenovedenie v Rosii [Հայագիտութիւնը Ռուսաստանում], Երևան, 1988, էջ 37;
- ⁴⁸ Հայկական սովետական հանրագիտարան, հատ. 2, Երևան, 1976, էջ 560. Հմմտ.՝ Հայկական համառօտ հանրագիտարան, հատ. 1, Երևան, 1990, էջ 567;
- ⁴⁹ Նոյն, էջ 1-12: Համապատասխանում է Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց քննական բնագրի (1913) 17-74րդ էջերին:
- ⁵⁰ Նոյն, էջ 12-23: Համապատասխանում է Խորենացու 1913 թուականի քննական բնագրի 101-250րդ էջերին:
- ⁵¹ Նոյն, էջ 23:
- ⁵² Նոյն, էջ 49-74:

HENRIC BRENNER AND
THE FIRST ABRIDGED LATIN TRANSLATION OF
MOVSÉS KHORENATSI'S
HISTORY OF THE ARMENIANS
(Summary)

PETROS HOVHANNISSIAN

The author sheds light on a long-standing uncertainty pertaining to the first translation and publication of Movses Khorénatsi's *History of the Armenians* and rectifies a number of misconceptions regarding the details of this translation and its publication.

Through solid proofs, the author concludes that:

- a) The first Latin translation of Khorentsi's *History* was done by a Dominican monk, Joannes Bartholomeus, and not by the Swede Henric Brenner (1669-1732).
- b) Brenner assisted in Bartholomeus' work; all the annotations of the translation are his.
- c) The translation finished in Isfahan in 1699.
- d) While in a Russian prison, Brenner did not work on Khorenatsi's *History*; Bartholomeus was never his cell-mate in prison.
- e) Dr. Eric Benzel, the chief librarian of Uppsala University, did not participate in the translation effort, except for suggesting its publication.
- f) This Latin edition is not a complete translation of the whole *History*, but an abridged version of Books I & II of the *History*.
- g) It was published in 1723 and not in 1733.